ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2015թ մայիսի 19 **N 55-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՇՂԱՐՇԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2015 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղական համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություն:
2. 2015 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ գյուղական համայնքում նշանակել և անցկացնել ավագանու անդամների հերթական ընտրություն:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ